1928—1935 թթ. նրա կատարած չափումները հանդիսանում են այդ եզրակացությունների լրացում և ճշտում, որ նա տալիս է իր վերջին, դեռևս ձեռագիր վիճակի մեջ մնացող աշխատության մեջ, որ ներկայացված է մեր թանգարանի Ազգագրական բաժնին[5]։

Պրոֆ. Բունակը այն կարծիքին է, որ արմենոիդ, կամ ինչպես ինքն է անվանում ըստ տարածման տերիտորիայի՝ պոնտա-զագրոշյան մարդաբանական տիպը մի հատված է կազմում այն պամիրա-ալպյան ռասայի, որը տարածված է Միջերկրական ծովից մինչև Պամիր։ Այդ հատվածը իր հատկանշական առանձնահատկություններով ամենացայտուն կերպով արտահայտված է Հայկական լեռնաշխարհում, թեև պատահում է նաև Փ. Ասիայում, Հյուսիսային Միջագետքում և Պաղեստինում։ Այստեղ նրա մեջ պարզ նշմարվում է երկու մարդաբանական տարրերի առկայությունը։ Մեկը ավելի տարածված է լեռնաշխարհի արևմտյան շրջաններում և վերջին դարում հայ ժողովրդի զանազան խմբերի տեղափոխության հետևանքով երևան է գալիս շատ ակնբախ կերպով Ապարանի և Լենինականի հայերի մեջ։ Դա թելադրում է պրոֆ. Բունակին այդ տարրը անվանել ապարանյան կամ արագածյան։ Երկրորդ տարրը գերազանցորեն գերիշխում է լեռնաշխարհի արևելյան գավառներում՝ սկսած Վանա լճից մինչև Ղարաբաղ և այդ տարրը նա կոչում է վանյան։ Մինչդեռ արագածյան տարրի գլխի ցուցանիշն է 84, վանյանինն է 86. մի առանձին խմբի մոտ նույնիսկ՝ 88։ Այսպիսով վանյան և նրա հետ ղարաբաղյան տարրը պատկանում է լայնագլուխ կամ բրախիկեֆալ, նույնիսկ գերլայնագլուխ—հիպեր-բրախիկեֆալ խմբին։ Ընդունելով հայկական ամբողջ բնակչության համար միջին հասակը հավասար 165 սմ, պրոֆ. Բունակի կազմած աղյուսակին նայելով՝ պետք է եզրակացնել, որ Ղարաբաղում գերիշխում է 161,5—163,4 սմ հասակը։ Այդ միջին հասակից ավելի կարճահասակների թիվը մեծ է, քան թե ավելի բարձրահասակներինը։ Ղարաբաղումն էլ, ինչպես Հայաստանի այլ գավառներում, իսկական բացգույն աչքերը չափազանց սակավաթիվ են և ընդհանրապես մուգ գույները այստեղ էլ գերիշխող են, այն է՝ շագանակագույն, կանաչ և բաց-շագանակագույն երանգավորումը, բայց այստեղ ուրիշ գավառների հետ համեմատած շատ ավելի մուգ։ Գլխի մազերի գույնն այստեղ էլ շագանակագույն երանգավորում ունեցող սևն է կամ մուգ-շագանակագույնն է. ուրիշ գավառների հետ համեմատած շատ են սևահերները. մորուքի և բեղերի մազերն ընդհանրապես գլխի մազերից ավելի շագանակագույն են։ Մարմինը, մանավանդ կուրծքը, ավելի մազոտ է, հոնքերն ավելի խիտ։ Ավելի մեծ տոկոս է կազմում միջին և ստորին երրորդական հատվածներում կորացող քիթը, ինչպես և հաստ շրթունքները։

Շատ հատկանշական է ղարաբաղյան՝ վանյան մարդաբանական տիպի այս շեշտակի տարբերությունն արևմտյանից, այսինքն արագածյան-ապարանյանից, որը սակայն, պետք է անվանել բարձր հայքյան, քանի որ ապարանցի և լենինականցի հայերը հազիվ մի հարյուր տարի առաջ են գաղթած

---

[5] *Бунак В. В.* Антропологические типы Армении. Այս հետազոտության 1934 և 1935 թթ. նյութերը հավաքված են Հայաստանի պետ. պատմական թանգարանի ազգագրական բաժնի վարիչի նախաձեռնությամբ և Առժողկոմատի նյութական օժանդակությամբ։ (Վարիչը եղել է Ստ. Լիսիցյանը (Ծան. խմբ.)։